Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Վեղի քաղաքի Խաչիկ Սողոմոնյանի անվան հ.2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դաստիարակի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Յուրաքանչյուր փուլի համար ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարի (պաշտոնների անվանացանկին համապատասխան):

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Դաստիարակի մրցույթը տեղի կունենա ապրիլի 1-ին ժամը 15:00-ին Արարատի մարզի Խաչիկ Սողոմոնյանի անվան հ.2 հիմնական դպրոցում. հասցե՝ ք. Վեղի, Գայի 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234)2-30-21, հեռախոսահամարով: